THE INTERNATIONAL
RAOUL WALLENBERG FOUNDATION

Վալլենբերգ Հիմնադրամը հայ փրկչին պարգևատրում է Վալլենբերգի մեդալով

Ռաուլ Վալլենբերգի Անվան Միջազգային Հիմնադրամի տնօրենների խորհուրդը միաձայն քվեարկությամբ հետմահու հարգանքի տուրք է մատուցում բժիշկ Հարություն Ռուբենի Խաչատրյանին՝ Հոլոքոստի ժամանակ ցուցաբերած փրկարարական գործողությունների համար:

Ձեր մեկնաբանությունները կարող եք ուղարկել Irwf.feedback@gmail.com - էլեկտրոնային հասցեին:

Աջ կողմում՝ բժիշկ Խաչատրյան, մեջտեղում՝ Իոսեֆ Կոգան

Բժիշկ Խաչատրյանը ծնվել է 1915թ.-ի ապրիլի 5-ին Նախիջևանի Կարախան-Բեկլու գյուղում: 1934-ին տեղափոխվեց Երևան և բժշկական կրթություն ստացավ Երևանի պետական բժշկական ինստիտուտում: 1939-ին որպես բժիշկ միացավ Խորհրդային բանակին: 1941թ.-ի օգոստոսին ձերբակալվեց նացիստների կողմից և բանտարկվեց Վելիկիե Լուկի քաղաքի մոտ: Այդ ճամբարում ծառայելով որպես բժիշկ, նա հանդիպեց և բուժեց վիրավոր հրեա բանտարկյալ Իոսեֆ Կոգանին՝ փրկելով նրա կյանքը:

1946թ.-ին բժիշկ Հարություն Խաչատրյանը վերադարձավ Հայաստան և 1946-49թթ. աշխատեց Աշտարակի շրջանային հիվանդանոցում որպես գլխավոր բժիշկ: 1949-ին նա մահվան դատապարտվեց՝ հայրենիքի դավաճանության մեղադրանքով: Դատավճիռն այնուհետ փոխվեց 25 տարվա ազատազրկման: 1949-ից 1956թթ. նա իր պատիժը կրեց Նորիլսկում, որը գտնվում է Սիբիրի երկրամասում: Ազատ արձակվեց 1956թ.-ին և վերականգնվեց իր պաշտոնում 1960-ին: 1956-1984թթ. որպես բժիշկ աշխատեց Երևանի թիվ 17-րդ պոլիկլինիկայում: 1983-ին տեղի ունեցավ նրա երկար սպասված վերամիրավորումը մարտական ընկերների ու բարեկամների հետ:

ԽՍՀՄ Պետական Անվտանգության կոմիտեին ուղղված Իոսեֆ Մովսեսի Կոգանի նամակը բացահայտում է, թե ինչպես այս հայ հերոսը՝ Հարություն Խաչատրյանը, փրկեց Կոգանի կյանքը: Այս նամակում Կոգանը պատմում է ամբողջ պատմությունը՝ նկարագրելով, թե քանի անգամ են հայերը և բժիշկ Խարատրյանը մասնավորապես, փրկել նրա կյանքը: Կոգանը ձերբակալվել էր գերմանացիների կողմից 1941թ.-ի օգոստոսին Վելիկիե Լուկի քաղաքի մոտ, աջ ոտքից վիրավոր և անգիտակից վիճակում և տեղափոխվել էր համանուն համակենտրոնացման ճամբար:

Բժիշկ Հարություն Խաչատրյանը բուժեց նրան և Կոգանը կարողացավ կրկին քայլել, սակայն ավելի ուշ հրեա ռազմագերին վարակվեց բծավոր տիֆով: Չնայած կարանտինին և մահամերձ հիվանդների հետ չշփվելու հրամանին, Խաչատրյանը շարունակեց այցելել նրան՝ սնունդ և դեղորայք բերելով:

Ռազմագերիներին պարբերաբար տեղափոխում էին տարբեր համակենտրոնացման ճամբարներ. Վելիկիե Լուկիից՝ Պոլոցկ, Պոլոցկից՝ Բորիսովո, Բորիսովոյից՝ Բենիամինովո (Լեհաստան): Բենիամինովոն Լեհաստանի միակ վայրը չէր, որտեղ խորհրդային ռազմագերիներ կային:Այնուհետև նրանց Բենիամինովոյից տեղափոխեցին Դեմբլին, Դեմբլինից՝ Պուլավի:

Վերջին երկու տարիների ընթացքում ՌՎՄՀ-ն ակտիվորեն փնտրում էր հայ փրկիչներին: Հայտնի հայ երգչուհի Աննա Խաչատրյանը տեղեկանալով, կապ հաստատեց ՌՎՄՀ-ի կամավոր պարոն Արտյոմ Չերնամորյանի հետ՝ պատմական տեղեկություններ տրամադրելով իր հանգուցյալ պապի՝ բժիշկ Հարություն Խաչատրյանի սխրանքների մասին:

Անվտանգության նկատառումներից ելնելով, բժիշկ Խաչատրյանը կազմակերպել էր, որպեսզի Իոսեֆ Կոգանը մնա հայ բանտարկյալների հետ՝ Միքայել Մարկոսյան (Միշա Մարկոսյան) անվան տակ: Ինչևէ, անհայտ անձի դավաճանության պատճառով նրա մասին Բորիսովո ճամբարի հրամանատարությանը հայտնի դարձավ:

«Անհետ կորածները» գրքում լրագրող Միքայել Հակոբյանը նկարագրում է մի դրվագ, որտեղ հայ ռազմագերի Ալեքսանդր Ղազարյանին (ավելի ուշ Ֆրանսիայի առաջին խորհրդային պարտիզանական ջոկատի հրամանատար) նացիստները կանչել էին Բորիսովո ճամբարի շտաբ, Մարկոսյանի (Կոգանի) հետ, ով հանդես էր գալիս որպես թարգմանիչ: Ղազարյանին հարցաքննում էին հրեա լինելու կասկածանքով: Իսկ այնուհետ նրան ազատ արձակեցին՝ Մարկոսյանի ուղեկցությամբ:

Ավելի ուշ Կոգանը նամակում գրում էր. «Պուլավի քաղաքի համակենտրոնացման ճամբարում անհայտ անձը շշուկներ տարածեց իմ ծագման մասին, և գերմանացիները բժշկական կոմիտե կազմեցին՝ պարզելու իմ ազգությունը: Թվում էր՝ մահվան դատավճիռն անխուսափելի էր, սակայն վերջին պահին, երբ ես ներկայանալու էի նացիստ բժիշկներին, հանձնաժողովի միակ ոչ գերմանացի բժիշկը կարողացավ դուրս գալ սենյակից՝ վտանգելով իր կյանքը, ինձ կանգնեցրեց միջանցքում և տեղեկացրեց, որ ինչ-որ մեկն ինձ մատնել է»:

1942թ-ին Բենիամինովո ճամբարում Հակաֆաշիստական ընդհատակյա հայրենասիրական կազմակերպության հիմնադիր հայ ռազմագերիների ջանքերով, Կոգանը կարողացավ թաքնվել և նույն գիշեր կազմակերպվեց նրա փախուստը:

Աջում՝ բժիշկ Հարություն Խարատրյան, Իոսեֆ Կոգան և նրանց մարտական ընկերները Ընտանեկան արխիվ, Երևան 1983

Ավելի քան 17 տարի անց, փոխգնդապետ Ալեքսանդր Ղազարյանի նամակի միջոցով նա տեղեկացավ, որ կրկին դավաճանության պատճառով նրա փախուստը կազմակերպած հայերը բանտարկվել էին ֆաշիստական այդ նույն համակենտրոնացման ճամբարում:

Հակաֆաշիստական ընդհատակյա հայրենասիրական կազմակերպության հիմնադիրներից մեկը՝ Վահան Վարդանյանն, իր հիշողություններում մանրամասն նկարագրում էր Կոգանի փախուստը. «Բժշկական հանձնաժողովից առաջ մենք որոշեցինք կազմակերպել նրա փախուստը մեր կազմակերպության հանդիպումներից մեկի ժամանակ: Մենք նրան զենք և փամփուշտներ տվեցինք: Նա կարողացավ թռչել պատից և փախչել:

Գերմանացիներն ամեն ինչ պարզեցին հաջորդ օրը, ամենայն հավանականությամբ, նույն տեղեկատուի միջոցով: Ստեփան Յաղջյանը արդարացվեց, իսկ մենք՝ մնացած տասս, դատապարտվեցինք որպես գերմանացի զինվորականներ»:

Մենք համարվում էինք Վերմախտի զինվորներ: Դատապարտվեցինք տարբեր տարիների ազատազրկման. հստակ չեմ հիշում քանի: Կարապետյանը դատապարտվեց մահապատժի՝ պարտիզանների հետ ունեցած ենթադրյալ կապի համար:

Բժիշկ Հարություն Խաչատրյանը մահացավ 1985թ.-ի նոյեմբերի 23-ին՝ 70 տարեկան հասակում: Ինչ վերաբերում է Կոգանին, ոչինչ հայտնի չէ նրա մասին Խաչատրյանի մահից հետո:

Ռաուլ Վալլենբերգի մեդալ շնորհելուց բացի ՌՎՄՀ-ը կնախաձեռնի հիշատակի նամականիշի թողարկմանն և բժիշկ Խաչատրյանի հերոսական պատմությունը կներգրավվի իր կրթական երիտասարդական ծրագրերի մեջ:

Պարոն Էդուարդո Էռնեկյանը՝ ՌՎՄՀ-ի նախագահն, իր գոհունակությունն արտահայտեց՝ նշելով, որ «բժիշկ Խաչատրյանը փրկիչ էր, հերոս և մեր պարտականությունն է ճանաչել նրան և կենդանի պահել նրա հերոսական ժառանգությունը»:

ՌՎՄՀ-ի հիմնադիր պարոն Բարուխ Տենեմբաումն ասաց, որ «Հոլոքոստի զոհերին աջակցություն ցուցաբերած հայերի թիվը փոփոխվում է, և մենք անդադար կշարունակենք լույս սփռել մյուս հայ հերոսների վրա»:

Սույն հոդվածը գրվել է պարոն Արտյոմ Չերնամորյանի հետ համատեղ:



Click on the image and read about the Centennial Activities

Follow us

twitter facebook YouTube